ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 09

12 սեպտեմբերի 2024 թվական

ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

գ. Փամբակ Ավագանու նստավայր

Նիստը վարում էր համայնքի ղեկավար, ավագանու անդամ Սուրեն Կոստանդյանը:

Նիստն արձանագրում էր աշխատակազմի քարտուղար՝ Ռաիսա Մինասյանը

Մասնակցում էին՝

«Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության ավագանու խմբակցության անդամներ՝ Սուրեն Կոստանդյանը, Արայիկ Քոչարյանը, Աշոտ Անտինյանը, Գրիգոր Կարապետյանը, Պավլիկ Պապինյանը, Էմմա Գասպարյանը, Արշակ Սրապյանը, Արմենուհի Ոսկանյանը և Շուշանիկ Հակոբյանը:

«Բարգավաճ Հայաստան» կուսակցության ավագանու խմբակցության անդամներ՝ Սասուն Մարանդյանը և Նաիրա Հարությունյանը:

Նիստից բացակայում էին՝

«Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության ավագանու խմբակցության անդամ՝ Սերյոժա Սարդարյանը և Սամվել Անանյանը:

«Բարգավաճ Հայաստան» կուսակցության ավագանու խմբակցության անդամներ՝ Սևակ Խաչատրյանը և Թիանա Բոջուկյանը:

Նիստն իրավազոր է՝ նիստին ներկա են ավագանու 11 անդամ

ՆԻՍՏԸ - Նիստը վարող Սուրեն Կոստանդյանը ժամը 14:00-ին նիստը հայտարարեց բացված:

Նիստ վարողն իր նախաձեռնությամբ առաջարկեց օրակարգի 3-րդ՝ «Փամբակ համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերն աճուրդ վաճառքով օտարելուն և կառուցապատման իրավունքներով տրամադրելուն համաձայնություն տալու, մեկնարկային գները, աճուրդի և մրցույթի պայմանները հաստատելու մասին» որոշման նախագծի 2-րդ՝ «Աճուրդ-վաճառքով օտարվում են հողամասեր» կետում կատարել լրացում՝ ավելացնել 2 լոտ, իսկ

օրակարգի մեջ ներառել և քվեարկել որպես լրացուցիչ 6-10-րդ հարցեր և որոշման նախագծեր հետևյալ բովանդակությամբ.

6. Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասն ուղղակի վաճառքով օտարելու մասին:

զեկ. Ա. Օհանյան

7. Եվրոպական միության կողմից իրականացվող «STRIVE» ծրագրի շրջանակներում գործադրվող «Վահագնիի տեխնոպարկի համալրում» համատեղ գործողությունների ծրագիրն իրականացնելու համար համայնքի բյուջեից համաֆինանսավորում կատարելու մասին:

զեկ. Ս. Վարդումյան

8. ԳՄՀԸ կողմից իրականացվող «Ինտեգրված համայնքային զարգացում Հայաստանում» ծրագրի շրջանակներում գործընկեր համայնք դառնալու վերաբերյալ Փամբակ համայնքի հայտը հաստատելու մասին:

զեկ. Հ. Մացակյան

9. Համայնքային սեփականություն հանդիսացող համայնքապետարանի շենքից վարձակալությամբ տարածք տրամադրելու մասին:

զեկ. Ա. Օհանյան

10. ՀՀ Լոռու մարզի Փամբակ համայնքի ավագանու 2023թվականի դեկտեմբերի 27-ի թիվ 148-ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:

զեկ. Կ. Շերմազանյան

Քվեարկությամբ, կողմ՝ 11 ձայների համաձայնությամբ որոշման նախագծերն ընդգրկվեցին օրակարգում:

Նիստ վարողն առաջարկեց հաստատել օրակարգը լրացուցիչ որոշման նախագծերով:

Քվեարկությամբ, կողմ՝ 11 ընդունվեց որոշում /կցվում է որոշում N 100-Ա/:

Հաստատվեց օրակարգը, ինչով էլ սպառվեց ներկայացված օրակարգի առաջին հարցը.

Հաստատված օրակարգը՝

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնքի ավագանու 2024թ-ի սեպտեմբերի 12-ի թիվ 09 հերթական նիստի օրակարգը հաստատելու մասին:

զեկ. Ս. Կոստանդյան

2. Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասն ուղղակի վաճառքով օտարելու մասին:

զեկ. Ա. Օհանյան

3. Փամբակ համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերն աճուրդ վաճառքով օտարելուն և կառուցապատման իրավունքներով տրամադրելուն համաձայնություն տալու, մեկնարկային գները, աճուրդի և մրցույթի պայմանները հաստատելու մասին:

զեկ. Ա. Օհանյան

4. Ձկնաբուծական արհեստական լճակների և անասնաշենքի կառուցման նպատակով սեփականության իրավունքով Հայկ Արտավազդի Մանասյանին պատկանող հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին:

զեկ. Ա. Օհանյան

5. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնքի ավագանու ութերորդ նստաշրջանի հերթական նիստի օրը սահմանելու մասին:

զեկ. Ս. Կոստանդյան

6. Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասն ուղղակի վաճառքով օտարելու մասին:

զեկ. Ա. Օհանյան

7. Եվրոպական միության կողմից իրականացվող «STRIVE» ծրագրի շրջանակներում գործադրվող «Վահագնիի տեխնոպարկի համալրում» համատեղ գործողությունների ծրագիրն իրականացնելու համար համայնքի բյուջեից համաֆինանսավորում կատարելու մասին:

զեկ. Ս. Վարդումյան

8. ԳՄՀԸ կողմից իրականացվող «Ինտեգրված համայնքային զարգացում Հայաստանում» ծրագրի շրջանակներում գործընկեր համայնք դառնալու վերաբերյալ Փամբակ համայնքի հայտը հաստատելու մասին:

զեկ. Հ. Մացակյան

9. Համայնքային սեփականություն հանդիսացող համայնքապետարանի շենքից վարձակալությամբ տարածք տրամադրելու մասին:

զեկ. Ա. Օհանյան

10. ՀՀ Լոռու մարզի Փամբակ համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 27-ի թիվ 148-ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:

զեկ. Կ. Շերմազանյան

ԸՆԹԱՑՔԸ՝

1. ԼՍԵՑԻՆ - Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասն ուղղակի վաճառքով օտարելու մասին հարցի նախագիծը:

- զեկուցեց Փամբակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի պետ Արտակ Օհանյանը:

Զեկուցողը ներկայացրեց, որ հաշվի առնելով Գուրգեն Խաչատուրի Նիկողոսյանի դիմումը, համայնքի ղեկավարի կողմից ներկայացված առաջարկությունը, առաջարկում է տալ համաձայնություն Գուրգեն Խաչատուրի Նիկողոսյանին սեփականության իրավունքով պատկանող 06-023-0234-0056 կադաստրային ծածկագրով 0,004313 հա հողամասին կից գտնվող 06-023-0234-0072 կադաստրային ծածկագրով, 0,000924 հա մակերեսով համայնքային սեփականություն հանդիսացող բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասը նախապատվությամբ, ուղղակի

վաճառքով Գուրգեն Խաչատուրի Նիկողոսյանին 4760 (չորս հազար յոթ հարյուր վաթսուն) ՀՀ դրամով օտարելուն:

Տեղի ունեցան քննարկումներ, որի ընթացքում զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

Քվեարկությամբ, կողմ՝ 11, ընդունվեց որոշում /կցվում է որոշում N 101-Ա/:

2. ԼՍԵՑԻՆ - Փամբակ համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերն աճուրդ վաճառքով օտարելուն և կառուցապատման իրավունքներով տրամադրելուն համաձայնություն տալու, մեկնարկային գները, աճուրդի և մրցույթի պայմանները հաստատելու մասին հարցի նախագիծը:

- զեկուցեց Փամբակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի պետ Արտակ Օհանյանը:

Զեկուցողը ներկայացրեց, որ առաջարկում է աճուրդ-վաճառքով օտարվող նախագծով ներկայացված 5 լոտ հողամասին ավելացնել ևս 2 լոտ և տալ համաձայնություն 7 լոտ հողամասերի աճուրդ-վաճառքին և 1 լոտ հողամասի կառուցապատման իրավունքով, 50 տարի ժամկետով տրամադրելուն:

Տեղի ունեցան քննարկումներ, որի ընթացքում զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

Քվեարկությամբ, կողմ՝ 11, ընդունվեց որոշում /կցվում է որոշում N 102-Ա/:

3. ԼՍԵՑԻՆ - Ձկնաբուծական արհեստական լճակների և անասնաշենքի կառուցման նպատակով սեփականության իրավունքով Հայկ Արտավազդի Մանասյանին պատկանող հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին հարցի նախագիծը:

- զեկուցեց Փամբակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի պետ Արտակ Օհանյանը:

Զեկուցողը ներկայացրեց, որ հաշվի առնելով Հայկ Արտավազդի Մանասյանի հայտը՝ ճարտարապետահատակագծային առաջադրանք տրամադրելու մասին, համայնքի ղեկավարի կողմից տրված նախագծային թույլատրությունը, առաջարկում է տալ համաձայնություն Հայկ Արտավազդի Մանասյանին սեփականության իրավունքով պատկանող 06-070-0376-0003 ծածկագրով 0,4638 հա գյուղատնտեսական հողերի նպատակային նշանակության 5-րդ կարգի խոտհարքից 0,1 հա հողամասը՝ ձկնաբուծական արհեստական լճակների կառուցման նպատակով, ջրային նպատակային նշանակության ջրային գործառնական նշանակության, իսկ 0,3638 հա հողամասը՝ անասնաշենք կառուցելու նպատակով, արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողերի նպատակային

նշանակության, գյուղատնտեսական արտադրական օբյեկտների հողերի գործառնական նշանակության փոխադրելուն:

Տեղի ունեցան քննարկումներ, որի ընթացքում զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

Քվեարկությամբ, կողմ՝ 11, ընդունվեց որոշում /կցվում է որոշում N 103-Ա/:

4. ԼՍԵՑԻՆ - Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասն ուղղակի վաճառքով օտարելու մասին հարցի նախագիծը:

- զեկուցեց Փամբակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի պետ Արտակ Օհանյանը:

Զեկուցողը ներկայացրեց, որ հաշվի առնելով Լուսինե Սերյոժայի Ոփյանի դիմումը, համայնքի ղեկավարի կողմից ներկայացված առաջարկությունը, առաջարկում է տալ համաձայնություն Լուսինե Սերյոժայի Ոփյանին սեփականության իրավունքով պատկանող 06-023-0604-0006 կադաստրային ծածկագրով 0,3 հա հողամասին կից գտնվող 06-023-0604-0016 կադաստրային ծածկագրով 0,1030 հա մակերեսով համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նպատակային նշանակության, խոտհարք գործառնական նշանակության հողամասը նախապատվությամբ, ուղղակի վաճառքով 25 000 (քսան հինգ հազար) ՀՀ դրամով նրան օտարելուն:

Տեղի ունեցան քննարկումներ, որի ընթացքում զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

Քվեարկությամբ, կողմ՝ 11, ընդունվեց որոշում /կցվում է որոշում N 104-Ա/:

5. ԼՍԵՑԻՆ - Եվրոպական միության կողմից իրականացվող «STRIVE» ծրագրի շրջանակներում գործադրվող «Վահագնիի տեխնոպարկի համալրում» համատեղ գործողությունների ծրագիրն իրականացնելու համար համայնքի բյուջեից համաֆինանսավորում կատարելու մասին հարցի նախագիծը:

- զեկուցեց Փամբակի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Ռաիսա Մինասյանը:

Զեկուցողը ներկայացրեց, որ ծրագիրն իրականացնում է «Վահագնի» զարգացման հիմնադրամի կողմից՝ Եվրոպական միության և Փամբակի համայնքապետարանի համաֆինանսավորմամբ: «STRIVE» ծրագրի շրջանակներում գործադրվող՝ «Վահագնիի տեխնոպարկի համալրում» համատեղ գործողությունների ծրագրի իրականացման համար առաջարկում եմ տալ համաձայնություն Փամբակ համայնքի 2024թ. բյուջեից 1200000 /մեկ միլիոն երկու հարյուր հազար/ ՀՀ դրամ համաֆինանսավորում կատարելուն: Ծրագրի

ընդհանուր բյուջեն կազմում է 5070000 ՀՀ դրամ, նախատեսվում է Վահագնիի տեխնոպարկը համալրել պտտվող գութանով և սրսկիչով:

Տեղի ունեցան քննարկումներ, որի ընթացքում զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

Քվեարկությամբ, կողմ՝ 11, ընդունվեց որոշում /կցվում է որոշում N 105-Ա/:

6. ԼՍԵՑԻՆ - ԳՄՀԸ կողմից իրականացվող «Ինտեգրված համայնքային զարգացում Հայաստանում» ծրագրի շրջանակներում գործընկեր համայնք դառնալու վերաբերյալ Փամբակ համայնքի հայտը հաստատելու մասին հարցի նախագիծը:

- զեկուցեց Փամբակի համայնքապետարանի աշխատակազմի իրավաբանական, քարտուղարության, անձնակազմի կառավարման և զարգացման ծրագրերի բաժնի պետ Հասմիկ Մացակյանը:

Զեկուցողը ներկայացրեց, որ առաջարկում է տալ համաձայնություն Փամբակ համայնքի մասնակցությանը Գերմանական միջազգային համագործակցության ընկերության (ԳՄՀԸ) կողմից իրականացվող «Ինտեգրված համայնքային զարգացում Հայաստանում» ծրագրի շրջանակներում գործընկեր համայնք դառնալու հայտերի ներկայացման հրավերին, ինչպես նաև համայնքի ընտրության դեպքում համայնքի տվյալ տարվա բյուջեից յուրաքանչյուր ծրագրի իրականացման համար 20 % համաֆինանսավորում հատկացնելուն:

Տեղի ունեցան քննարկումներ, որի ընթացքում զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

Քվեարկությամբ, կողմ՝ 11, ընդունվեց որոշում /կցվում է որոշում N 106-Ա/:

7. ԼՍԵՑԻՆ - Համայնքային սեփականություն հանդիսացող համայնքապետարանի շենքից վարձակալությամբ տարածք տրամադրելու մասին հարցի նախագիծը:

- զեկուցեց Փամբակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի պետ Արտակ Օհանյանը:

Զեկուցողը ներկայացրեց, որ հաշվի առնելով համայնքի ղեկավարի կողմից ներկայացված առաջարկությունը՝ «Բազումի վիտամիններ» ԳԿ-ին վարձակալությամբ տարածք տրամադրելու մասին, առաջարկում է տալ համաձայնություն համայնքային սեփականություն հանդիսացող Փամբակ համայնքի Բազում բնակավայրի 3-րդ փողոց 8 հասցեում գտնվող համայնքապետարանի շենքից 14,11 ք/մ մակերեսով տարածքը գրասենյակ օգտագործելու նպատակով, 3 տարի ժամկետով, 5000 /հինգ հազար/ ՀՀ դրամ տարեկան վարձավճարով, վարձակալության իրավունքով «Բազումի վիտամիններ» ԳԿ-ին տրամադրելուն:

Տեղի ունեցան քննարկումներ, որի ընթացքում զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

Քվեարկությամբ, կողմ՝ 11, ընդունվեց որոշում /կցվում է որոշում N 107-Ա/:

8. ԼՍԵՑԻՆ - ՀՀ Լոռու մարզի Փամբակ համայնքի ավագանու 2023թ-ի դեկտեմբերի 27-ի թիվ 148-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին հարցի նախագիծը:

- զեկուցեց Փամբակի համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրամն բաժնի առաջատար մասնագետ Կիմա Շերմազանյանը:

Զեկուցողը ներկայացրեց, որ 2024թ-ի բյուջեում նախատեսվում է իրականացնել հետևյալ փոփոխությունները.

1. 01.06.01 խմբի 5112 հոդվածից 17.737.934 ՀՀ դրամը պակասեցնել, որից՝
   - 15.237.934 ՀՀ դրամը տեղափոխել փողոցային լուսավորության 06,04,01 խմբի 5112 հոդված՝ որպես սուբվենցիոն ծրագրի համայնքի մասնաբաժին.
   - 1300000 ՀՀ դրամը տեղափոխել աղբահանության՝ 05,01,01 խմբի 4213 հոդված՝ Մարգահովիտ բնակավայրի աղբահանությունն իրականացնելու նպատակով Փիոլետովո համայնքի հետ ծառայության մատուցման պայմանագիր կնքելու համար.
   - 1200000 ՀՀ դրամը տեղափոխել 01.06.01 խմբի 5511 հոդված՝ Եվրոպական միության կողմից իրականացվող «STRIVE» ծրագրի շրջանակներում գործադրվող «Վահագնիի տեխնոպարկի համալրում» ծրագրին համաֆինանսավորելու նպատակով:
2. Պետական բյուջեից տրամադրվող սուբվենցիաների եկամուտների մասում ավելացվում է 28828666 ՀՀ դրամ, որն ուղղվում է 06.04.01 խմբի 5112 հոդված՝ որպես փողոցային լուսավորության սուբվենվիոն ծրագրի պետության մասնաբաժին:

Տեղի ունեցան քննարկումներ, որի ընթացքում զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

Քվեարկությամբ, կողմ՝ 11, ընդունվեց որոշում /կցվում է որոշում N 108-Ն/:

9. ԼՍԵՑԻՆ - Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնքի ավագանու ութերորդ նստաշրջանի հերթական նիստի օրը սահմանելու մասին հարցի նախագիծը:

- Նիստը վարողն առաջարկեց քվեարկությամբ որոշել Փամբակ համայնքի ավագանու ութերորդ նստաշրջանի հերթական նիստի օրը: Համայնքի ղեկավարն առաջարկեց հաջորդ նիստի օր նշանակել 2024 թվականի հոկտեմբերի 15-ը: Առաջարկը դրվեց քվեարկության:

Քվեարկությամբ, կողմ՝ 11, ընդունվեց որոշում */կցվում է որոշում N 109-Ա/:*

Փամբակ համայնքի ավագանու ութերորդ նստաշրջանի հերթական նիստի օր նշանակել 2024 թվականի հոկտեմբերի 15-ը: Նիստի սկիզբ սահմանվեց ժամը 14.00-ն:

ՆԻՍՏԻՆ ՆԵՐԿԱ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

ԱՆՏԻՆՅԱՆ ԱՇՈՏ _____

ԳԱՍՊԱՐՅԱՆ ԷՄՄԱ _____

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԳՐԻԳՈՐ _____

ԿՈՍՏԱՆԴՅԱՆ ՍՈՒՐԵՆ _____

ՀԱԿՈԲՅԱՆ ՇՈՒՇԱՆԻԿ _____

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆԱԻՐԱ _____

ՄԱՐԱՆԴՅԱՆ ՍԱՍՈՒՆ _____

ՈՍԿԱՆՅԱՆ ԱՐՄԵՆՈՒՀԻ _____

ՊԱՊԻՆՅԱՆ ՊԱՎԼԻԿ _____

ՍՐԱՊՅԱՆ ԱՐՇԱԿ _____

ՔՈՉԱՐՅԱՆ ԱՐԱՅԻԿ _____

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍՈՒՐԵՆ ԿՈՍՏԱՆԴՅԱՆ

ԱՐՁԱՆԱԳՐՈՂ՝ ՌԱԻՍԱ ՄԻՆԱՍՅԱՆ